



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araq.s.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

14 հունիսի 2023 թվական N 574-Ա

ՇԱՄՈ ԲԱՔՐԻ ԳԵԼՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանս քննության առնելով վարչական վարույթի գործը՝ Արաքս համայնքի Առատաշեն գյուղի բնակիչ Շամո Բաքրի Գելոյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի(երի)/հողամասի(երի) նկատմամբ հարկային պարտավորությունները չկատարելու մասին **պարզեցի՝**

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից Շամո Բաքրի Գելոյանի /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Առատաշեն, Երիտասարդական փ. 16/ նկատմամբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցվել է վարչական վարույթ՝ վերջինիս սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի(երի)/հողամասի(երի) նկատմամբ հարկային պարտավորությունները չկատարելու մասին, որի արդյունքում կուտակվել էր = 319.760 ՀՀ դրամ պարտք:

Շամո Բաքրի Գելոյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն, պատշաճ ծանուցված էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին: /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2023 թվականի մայիսի 19-ին տրված ստացականը/:

Շամո Բաքրի Գելոյանը 2023 թվականի հունիսի 14-ին ներկայացել է վարչական վարույթի լսմանը, ներկայացրել է կատարված մասնակի վճարումը հաստատող փաստաթուղթ /անդորրագիր՝ N 76960280/:

Արդյունքում՝ Արաքսի համայնքապետարանի և Շամո Բաքրի Գելոյանի միջև կնքվել է վճարման պլան-ժամանակացույց՝ երեք ամիս ժամկետով:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, որի համաձայն՝ «Վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում».

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Շամո Բաքրի Գելոյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կասեցնել 2023 թվականի հունիսի 14-ին կազմված ժամանակացույցի վերջնաժամկետով՝ մինչև 2023 թվականի սեպտեմբերի 14-ը:

2. Վարչական վարույթը կասեցնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, կամ հրապարակման պահից՝ համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով, կամ ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու միջոցով:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հունիսի 14
Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araks.hamaynq@gmail.com, hbn.՝ (093)554477

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2023 թվական N 573-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ՝ ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 38-րդ և 39-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի Իսահակյան փողոցի 33 տան բնակչուհի Նելլի Ապրեսիկի Անդրեասյանի 2023 թվականի հունիսի 06-ի դիմումը /նույնականացման քարտ՝ 011456076, տրված՝ 21.10.2021թ. 057-ի կողմից/, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2023 թվականի հունիսի 13-ի N 6 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլտվություն տալ Նելլի Ապրեսիկի Անդրեասյանին հանդես գալու իր խնամքի տակ գտնվող անչափահաս զավակների՝ Մարի Աղասի Վաղարշակյանի /ծնվ՝ 21.12.2013թ./ և Կառլեն Աղասի Վաղարշակյանի /ծնվ՝ 16.07.2017թ./, անունից.

զավակներին /1/3 բաժնային մասով/ ժառանգության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի 04-013-0121-0083 կադաստրային ծածկագրով, 0,7289 հա մակերեսով հողամասի օտարման գործընթացում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հունիսի 14
Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունիսի 2023 թվականի N 572-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի վարչական տարածքում գտնվող՝ 04-017-0023-0022 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Երաքս համայնք, գյուղ Արաքս, Շ. Ազնավուրի 5 հասցե:
2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հունիսի 13
Արաքս համայնք





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, arags.hamaynoq@gmail.com, հեռ՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2023 թվական N 571-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՈՐԻԿ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄՆԱՅԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 31-րդ հոդվածի 9-րդ մասով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 158-րդ հոդվածներով, 161-րդ հոդվածի 2-րդ մասով, 163-րդ և 164-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 18.1-րդ կետը և Նորիկ Տերտերյանի 2023 թվականի հունիսի 12-ի դիմումը,

Որոշում եմ՝

1. Արաքս համայնքի Առատաշեն գյուղի վարչական ղեկավար Նորիկ Տերտերյանին տրամադրել 2022 թվականի ամենամյա չօգտագործված արձակուրդի մնացած մասը՝ 12 աշխատանքային օր տևողությամբ, 2023 թվականի հունիսի 19-ից:
2. Առատաշեն գյուղի վարչական ղեկավարի պարտականությունները ժամանակավորապես կատարող նշանակել Արաքս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վահրամ Հարությունյանին:
3. Նորիկ Տերտերյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի հուլիսի 6-ից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հունիսի 13

Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araqh.hamaynoq@gmail.com, hbn, (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2023 թվական N 570-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԶՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանս ուսումնասիրելով Վարդան Զարգանդի Դավթյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը **պարզեցի՝**

Արաքս համայնքապետարանի Առատաշեն գյուղի օպերատորի կողմից 05.05.2023թ.-ին տրված տեղեկանքները հավաստում են, որ քաղաքացի Վարդան Զարգանդի Դավթյանը (հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գյուղ Առատաշեն, Թումանյան փ. 71 տ.) հանդիսանալով անշարժ գույքի հարկ և գույքահարկ վճարող սուբյեկտ, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով (01.01.2021 թվականին ուժը կորցրել է), «Հարկերի մասին» ՀՀ օրենքով (01.01.2018 թվականին ուժը կորցրել է) և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հարկեր վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի մայիսի 10-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ:

Վարդան Զարգանդի Դավթյանը պատշաճ կերպով ծանուցվել է վարչական վարույթի հարուցման մասին /հիմք՝ Վարդան Զարգանդի Դավթյանի կողմից ծանուցագրի մեկ օրինակի վրա 2023 թվականի մայիսի 12-ին արված գրառումը և ստորագրությունը/: Վերջինիս առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 3-օրյա ժամկետում ներկայացնել դիմում (պնդում) վարչական գործով լուծման անցկացնելու վերաբերյալ և կատարել համայնքի հանդեպ առաջացած հարկային պարտավորությունները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով այն հանգամանքը,

որ Վարդան Զարգանդի Դավթյանի կողմից ծանուցագիրը ստանալուց հետո պնդում չի ներկայացվել լսում անցկացնելու անհրաժեշտության մասին, վարչական վարույթի լսում չի անցկացվել:

Վարչարարության կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հիմք ընդունելով գույքային հարկերի հաշվառման համար հիմք հանդիսացող «Վեկտոր պլուս» և «E-community» ծրագրերից ձեռք բերված տվյալները՝ Վարդան Զարգանդի Դավթյանը չի կատարել ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղում գտնվող, համաձայն Կադաստրի կոմիտեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքերի մասով հարկային պարտավորությունները, որի հետևանքով 05.05.2023 թվականի դրությամբ գոյացել է՝

1. Անշարժ գույքի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի Հ. Թումանյան փողոց 71 հասցեում գտնվող 04-013-0076-0013-004 կադաստրային ծածկագրով անհատական տան մասով՝ 3113 (երեք հազար հարյուր տասներեք) ՀՀ դրամ, որից 2759 (երկու հազար յոթ հարյուր հիսունինը) ՀՀ դրամը 2021-2022թթ.-ի ապառքի գումար և 354 (երեք հարյուր հիսունչորս) ՀՀ դրամը 2021-2022թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

2. Հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղում գտնվող 04-013-076-013 կադաստրային ծածկագրով հողամասի մասով՝ 45371 (քառասունհինգ հազար երեք հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ, որից 30,651 (երեսուն հազար վեց հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամը 2010-2020թթ.-ի ապառքի գումար և 14,720 (տասնչորս հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամը 2010-2020թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

3. Հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի Հ. Թումանյան փողոց 8 հասցեում գտնվող 04-013-0020-0004 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասի մասով 41,121 (քառասունմեկ հազար հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ, որից 28,450 (քսանութ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամը 2009-2022թթ.-ի ապառքի գումար և 12,671 (տասներկու հազար վեց հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամը հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

4. Հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի Ա. Այվազյան փողոց 13 հասցեում գտնվող 04-013-0020-0018 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասի մասով՝ 32,388 (երեսուներկու հազար երեք հարյուր ութսունութ) ՀՀ դրամ, որից 23,099 (քսաներեք հազար իննսունինը) ՀՀ դրամը 2008-2022թթ.-ի ապառքի գումար և 9,289 (ինը հազար

երկու հարյուր ութսունինը) ՀՀ դրամը 2008-2022թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

5. Հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղում գտնվող 04-013-0127-0001 կադաստրային ծածկագրով հողամասի մասով/բազմամյա խաղողի տնկարկներ/՝ 383,604 (երեք հարյուր ութսուներեք հազար վեց հարյուր չորս) ՀՀ դրամ, որից 267,190 (երկու հարյուր վաթսունյոթ հազար հարյուր իննսուն) ՀՀ դրամը 2009-2022թթ.-ի ապառքի գումար և 116,414 (հարյուր տասնվեց հազար չորս հարյուր տասնչորս) ՀՀ դրամը 2009-2022թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

6. Հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղում գտնվող 04-013-0127-0005 կադաստրային ծածկագրով հողամասի մասով/բազմամյա խաղողի տնկարկներ/՝ 89595 (ութսունինը հազար հինգ հարյուր իննսունհինգ) ՀՀ դրամ, որից 63550 (վաթսուներեք հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամը 2010-2022թթ.-ի ապառքի գումար և 26,045 (քսանվեց հազար քառասունհինգ) ՀՀ դրամը 2010-2022թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

7. Անշարժ գույքի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղում գտնվող 04-013-0061-0023 հողումասի և դրա վրա կառուցված 04-013-0061-0028-002 կադաստրային ծածկագրով արտադրական նշանակության շինության մասով՝ 45,134 (քառասունհինգ հազար հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ, որից 32,348 (երեսուներկու հազար երեք հարյուր քառասունութ) ՀՀ դրամը 2010-2022թթ.-ի ապառքի գումար և 12786 (տասներկու հազար յոթ հարյուր ութսունվեց) ՀՀ դրամը 2010-2022թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մոծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «բ» մասի համաձայն Հայաստանի Հանրապետության տեղական հարկի տեսակներն են՝ գույքահարկը, հողի հարկը, ...:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար վերը նշված օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գույքահարկ վճարողներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները,

օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույք:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հարկվող օբյեկտն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա գույքահարկի գծով սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են պատասխանատվություն՝ յուրաքանչյուրն իր բաժնի չափով:

ՀՀ հարկային օրենսգրքի 225-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե հարկման օբյեկտն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա անշարժ գույքի հարկի գծով սույն բաժնով սահմանված պարտավորությունների համար նրանք պատասխանատվություն են կրում յուրաքանչյուրն իր բաժնի չափով:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերը, շինությունները, փոխադրամիջոցները:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ֆիզիկական անձինք գույքահարկի գումարը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում, տվյալ դեպքում ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի բյուջե, մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե, իսկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 13.5-րդ հոդվածը սահմանում է՝ տեղական հարկատեսակների և դրույքաչափերի սահմանումը, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող եկամուտների հաշվառումը, վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը) և վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորություններն են:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող եկամուտներ են համարվում տեղական հարկերի, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունը, որոնց

հաշվառումը, վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքագրումը) և վճարման նկատմամբ հսկողությունն օրենքով վերապահված է տեղական ինքնակառավարման մարմինին:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը՝ որպես պետության պատվիրակած լիազորություն իրանացնել գույքահարկի գանձումը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Նույն մասի 4-րդ կետի համաձայն՝ տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 01.01.2021) 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը...:

Նույն օրենքի 12-րդ հոդվածը սահմանում է՝ հողի հարկի հաշվարկման համար հիմք են հանդիսանում հողի սեփականության, մշտական կամ ժամանակավոր օգտագործման իրավունքը հիմնավորող փաստաթղթերը:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ հողի հարկի չափը կապված չէ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից և սահմանվում է հողակտորի միավոր մակերեսի համար հաստատագրված վճարի ձևով, որը վճարվում է տարվա համար: Սույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը: Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գյուղատնտեսական նշանակության հողերի (ներառյալ բնակավայրերում բնակչինարարության համար հատկացված, տնամերձ և այգեգործական (ամառանոցային) հողամասերը) համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է դրանց կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի 15 տոկոսի չափով:

«Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձանց հողի հարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին, 16-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձինք հողի հարկի տարեկան գումարը սույն հոդվածով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում երկու հավասար մասերով, մինչև հաշվետու տարվա նոյեմբերի 15-ը (ներառյալ):

Հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գնտվնելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի՝ հաշվառող մարմինները հաշվարկում են ֆիզիկական անձանց շինությունների հետագա երեք տարիների գույքահարկի գումարները հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների հաշվառման և գնահատման վերաբերյալ ներկայացված տեղեկությունները: 2003 թվականի հունվարի 1-ից սկսած՝ տեղական ինքնակառավարման մարմինները Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով գույքահարկի հաշվարկման հայտը հարկային մարմնի հետ համաձայնեցնելով, հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների հաշվառման և գնահատման, ինչպես նաև փոխադրամիջոցների գծով հաշվառում (գրանցում) վարող համապատասխան լիազոր մարմինների կողմից փոխադրամիջոցների վերաբերյալ ներկայացրած տեղեկությունները՝ կարող են հաշվարկել ֆիզիկական անձանց շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկը: Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է՝ ֆիզիկական անձանց շինությունների գույքահարկի ինքնուրույն հաշվարկն իրականացնող տեղական ինքնակառավարման մարմինները գույքահարկ վճարող ֆիզիկական անձանց հաշվառող մարմին են համարվում սույն օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գույքահարկի ինքնուրույն հաշվարկը սկսելու օրվանից:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ է համարվում հողամասի վրա կառուցված անհատական բնակելի տունը:

Սույն օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է՝ գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա սույն օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը: Նույն հոդվածի 1-ին մասի համաձայն շինությունների հարկման բազա է համարվում սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքը:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում նշված հարկվող օբյեկտ համարվող շինությունների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

հարկման բազան	հարկի դրույքաչափը
մինչև 3 մլն դրամը ներառյալ	հարկման բազայի 0 տոկոսը
3 մլն դրամից մինչև 10 մլն դրամը ներառյալ	100 դրամ՝ գումարած հարկման բազայի 3 մլն դրամը գերազանցող գումարի 0.1 տոկոսը
10 մլն դրամից մինչև 20 մլն դրամը ներառյալ	7,100 դրամ՝ գումարած հարկման բազայի 1 մլն դրամը գերազանցող մասի 0.2 տոկոսը

20 մլն դրամից մինչև 30 մլն դրամը ներառյալ	27,100 դրամ՝ գումարած հարկման բազայի 20 մլն դրամը գերազանցող մասի 0.4 տոկոսը
30 մլն դրամից մինչև 40 մլն դրամը ներառյալ	67,100 դրամ՝ գումարած հարկման բազայի 30 մլն դրամը գերազանցող մասի 0.6 տոկոսը
40 մլն դրամից ավելի	127,100 դրամ՝ գումարած հարկման բազայի 40 մլն դրամը գերազանցող մասի 1.0 տոկոսը

ՀՀ հարկային օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող հարկային պարտավորությունները 2018 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև Օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

Նույն հոդվածի 1.1-րդ մասի համաձայն՝ մինչև օրենսգրքի 11-րդ և 12-րդ բաժիններն ուժի մեջ մտնելն ավարտված հաշվետու ժամանակաշրջաններին վերաբերող՝ գույքահարկի և հողի հարկի գծով հարկային պարտավորությունները 2021 թվականի հունվարի 1-ից հետո դադարած չեն համարվում և ենթակա են կատարման մինչև օրենսգիրքն ուժի մեջ մտնելը գործող օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում:

ՀՀ Հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տեղական հարկեր, որոնցից է անշարժ գույքի հարկը:

Օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար ՀՀ հարկային օրենսգրքի 45-րդ գլխով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկ վճարողներ են համարվում կազմակերպություններն ու ֆիզիկական անձինք...: Օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն անշարժ գույքի հարկով հարկման օբյեկտ է համարվում անշարժ գույքը՝ հողամասերը և (կամ) դրանց բարելավումները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասերի բարելավումներ են համարվում հողամասերում կառուցված հետևյալ ստորգետնյա և վերգետնյա շենքերը, շինությունները կամ կառույցները՝ բնակելի նշանակության շինությունները, այդ թվում՝ անհատական բնակելի տունը՝ հողամասի վրա կառուցված, իր տնտեսական շինություններով կառույցը:

Օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ անշարժ գույքի հարկով հարկման բազա են համարվում անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ

գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանող օրենքով սահմանված կարգով գնահատված՝ հողամասերի (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի) և (կամ) դրանց բարելավումների շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքները:

Օրենսգրքի 229-րդ հոդվածը սահմանում է անշարժ գույքի հարկի դրույքաչափերը, որը 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ առանց բարելավումների (այդ թվում՝ միայն պարսպով բարելավված) ոչ գյուղատնտեսական նշանակության հող հանդիսացող անշարժ գույքի համար, որոնք բնակավայրերի հողերից բնակելի կառուցապատման համար նախատեսված հողեր են՝ անշարժ գույքի հարկի տարեկան դրույքաչափը կազմում է 0,6 %:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Օրենսգրքի 227-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» և «գ» ենթակետերով, 7-րդ և 8-րդ կետերով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող՝ անհատական բնակելի տուն և այգետնակ հանդիսացող անշարժ գույքի համար՝ անշարժ գույքի հարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝ հարկման բազան 23 միլիոն դրամից ավելի՝ մինչև 50 միլիոն դրամը ներառյալ՝ 19,500 դրամ՝ գումարած հարկման բազայի 23 միլիոն դրամը գերազանցող մասի 0,2 տոկոսը:

Օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ 2021 թվականի հաշվետու տարվա համար անշարժ գույքի հարկը (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողերի) հաշվարկվում է անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների և Օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերով սահմանված դրույքաչափերի արտադրյալի 25 տոկոսի չափով, 2022 թվականի հաշվետու տարվա համար՝ 30 տոկոսի չափով, 2023 թվականի հաշվետու տարվա համար՝ 35 տոկոսի չափով, 2024 թվականի հաշվետու տարվա համար՝ 50 տոկոսի չափով, 2025 թվականի հաշվետու տարվա համար՝ 75 տոկոսի չափով և 2026 թվականի հաշվետու տարվա և հետագա հաշվետու տարիների համար՝ 100 տոկոսի չափով:

Օրենսգրքի 236-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունները և ֆիզիկական անձինք անշարժ գույքի հարկի տարեկան գումարները (այդ թվում՝ Օրենսգրքի 231-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում ու կարգով հաշվարկված անշարժ գույքի հարկի պարտավորության գումարները) անշարժ գույքի գտնվելու վայրի համայնքի բյուջե են վճարում մինչև հարկային տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ...:

Օրենսգրքի 226-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմիններ իրականացնում են հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի հաշվառումը՝ Կառավարության սահմանած կարգով անշարժ գույքի հարկի վճարումների ընդունումը (այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների հավաքումը), վճարման նկատմամբ հսկողությունը, ինչպես նաև հարկային վարչարարությունը:

«Հարկերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն հարկային օրենսդրության խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

«Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Օրենսգրքի 397-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Օրենսգրքի 400-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հարկային իրավախախտման համար որպես հարկային պատասխանատվության միջոց կարող է կիրառվել տույժ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տույժի հաշվարկման դեպքում Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու կամ սահմանված ժամկետից ուշ վճարելու յուրաքանչյուր օրվա համար հաստատուն տոկոսադրույքով:

Հարկ համարելով կրկին անդրադառնալ «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետին՝ համաձայն որի՝ ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը այդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ, այսինքն՝ հարկային պարտավորության խախտումը յուրաքանչյուր տարվա համար վրա է հասնում այդ տարվա դեկտեմբերի 2-ին: Մինչև 01.01.2018 թվականը գործող «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0,15 տոկոսի չափով: Նշված չափերով օրական տույժերը կիրառվում են, եթե հարկային օրենսդրությամբ ավելի նվազ չափ սահմանված չէ:

Վերոհիշյալ տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում նաև հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

ՀՀ հարկային օրենսգրքի (ուժի մեջ է մտել 01.01.2018 թվականին) մինչև 14.05.2020 թվականը գործող խմբագրությամբ 401-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.075 տոկոսի չափով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով սահմանված տույժը կիրառվում է ժամանակին չմոծված հարկի գումարի (այդ թվում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային գումարների, հարկային հսկողության արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

14.05.2021 թվականին ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի (համար՝ ՀՕ-220-Ն) 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի 1-ին մասում «0.075» թիվը փոխարինվել է «0.04» թվով: Իսկ նույն օրենքի 3-րդ մասի համաձայն՝ նույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և տարածվում է 2020 թվականի ապրիլի 21-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

2020 թվականի ապրիլի 21-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը տույժը վճարում է 0.04 տոկոսի չափով, այդ թվում՝ նաև այն դեպքում, եթե տույժերի հաշվարկն սկսվել է մինչև օրենքն ուժի մեջ մտնելը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ Հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին, 225-րդ հոդվածի 1-ին և 4-րդ, 227-րդ հոդվածի 1-ին և 2-րդ, 228-րդ հոդվածի 1-ին, 229-րդ հոդվածի 4-րդ, 233-րդ հոդվածի 1-ին և 236-րդ հոդվածի 1-ին, 400-րդ հոդվածի 3-րդ, 447-րդ հոդվածի 1-ին և 1.1-րդ մասերով, ՀՀ հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 226-րդ և 400-րդ հոդվածների 1-ին մասի 2-րդ կետերով, 229-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետով, 401-րդ հոդվածով, 2020 թվականի ապրիլի 22-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՕ-220-Ն օրենքով, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-4-րդ, 17-րդ հոդվածներով, 6-րդ հոդվածի 2-րդ, 10-րդ հոդվածի 3-րդ, 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ և 14-րդ հոդվածի 3-րդ մասերով, 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 1-4-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածներով, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13.5-րդ, 17-րդ, 21-րդ և 23-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և 38-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետերով, 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 89-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Վարդան Զարգանդի Դավթյանից հոգուտ Արաքս համայնքի բյուջեի գանձել ընդհանուր՝ 640,326 (վեց հարյուր քառասուն հազար երեք հարյուր քսանվեց) ՀՀ դրամ, որից անշարժ գույքի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի Հ. Թումանյան փողոց 71 հասցեում գտնվող 04-013-0076-0013-004 կադաստրային ծածկագրով անհատական տան մասով՝ 3113 (երեք հազար հարյուր տասներեք) ՀՀ դրամ, որից 2759 (երկու հազար յոթ հարյուր հիսունինը) ՀՀ դրամը 2021-2022թթ.-ի ապառքի գումար և 354 (երեք հարյուր հիսունչորս) ՀՀ դրամը 2021-2022թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր, Հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղում գտնվող 04-013-076-013 կադաստրային ծածկագրով հողամասի մասով՝ 45371 (քառասունհինգ հազար երեք հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամ, որից 30,651 (երեսուն հազար վեց հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամը 2010-2020թթ.-ի ապառքի գումար և 14,720 (տասնչորս հազար յոթ հարյուր քսան) ՀՀ դրամը 2010-2020թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր, հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի Հ. Թումանյան փողոց 8 հասցեում գտնվող 04-013-0020-0004 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասի մասով 41,121 (քառասունմեկ հազար հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ, որից 28,450 (քսանութ հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամը 2009-2022թթ.-ի ապառքի գումար և 12,671 (տասներկու հազար վեց հարյուր յոթանասունմեկ) ՀՀ դրամը հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր, հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի Ա. Այվազյան փողոց 13 հասցեում գտնվող 04-013-0020-0018 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման հողամասի մասով՝ 32,388 (երեսուներկու հազար երեք հարյուր ութսունութ) ՀՀ դրամ, որից 23,099 (քսաներեք հազար ինսունինը) ՀՀ դրամը 2008-2022թթ.-ի ապառքի գումար և 9,289 (ինը հազար երկու հարյուր ութսունինը) ՀՀ դրամը 2008-2022թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր, հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղում գտնվող 04-013-0127-0001 կադաստրային ծածկագրով հողամասի մասով/բազմամյա խաղողի տնկարկներ/՝ 383,604 (երեք հարյուր ութսուներեք հազար վեց հարյուր չորս) ՀՀ դրամ, որից 267,190 (երկու հարյուր վաթսույոթ հազար հարյուր ինսուն) ՀՀ դրամը 2009-2022թթ.-ի ապառքի գումար և 116,414 (հարյուր տասնվեց հազար չորս հարյուր տասնչորս) ՀՀ դրամը 2009-2022թթ.-ի հարկային պարտավորությունները ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր, հողի հարկի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղում գտնվող 04-013-0127-0005 կադաստրային ծածկագրով հողամասի մասով/բազմամյա խաղողի տնկարկներ/՝ 89595 (ութսունինը հազար հինգ հարյուր ինսունհինգ) ՀՀ դրամ, որից 63550 (վաթսուներեք հազար հինգ հարյուր հիսուն) ՀՀ դրամը 2010-2022թթ.-ի ապառքի գումար և 26,045 (քսանվեց հազար քառասունհինգ) ՀՀ դրամը 2010-2022թթ.-ի հարկային պարտավորությունները

Ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր, անշարժ գույքի հարկային պարտավորություն Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղում գտնվող 04-013-0061-0023 հողումասի և դրա վրա կառուցված 04-013-0061-0028-002 կադաստրային ծածկագրով արտադրական նշանակության շինության մասով՝ 45,134 (քառասունհինգ հազար հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ, որից 32,348 (երեսուներկու հազար երեք հարյուր քառասունութ) ՀՀ դրամը 2010-2022թթ.-ի ապառքի գումար և 12786 (տասներկու հազար յոթ հարյուր ութսունվեց) ՀՀ դրամը 2010-2022թթ.-ի հարկային պարտավորությունները Ժամանակին չվճարելու դիմաց հաշվարկված տույժեր:

2. Մինչև 2020 թվականը ներառյալ անշարժ գույքի հարկի հաշվարկված ապառքը և տույժերը վճարել Արաքս համայնքի Առատաշեն գյուղի 9003251153014 հաշվեհամարին: Հողի հարկի հարկային պարտավորությունների վճարումը կատարել Արաքս համայնքի Առատաշեն գյուղի 900325153048 հաշվեհամարին: 2021-2022թթ.-ի ապառքի գումարի և 2022թ. տույժի գումարի վճարումը կատարել Արաքս համայնքի Առատաշեն գյուղի 900325006006 հաշվեհամարին: Ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղ:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Արաքս համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:
4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ համայնքապետարանի տեղեկագրում հրապարակելու միջոցով:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հունիսի 12

Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araks.hamaynq@gmail.com, [httn:' \(093\)554477](tel:+37493554477)

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2023 թվական N 569-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱՔՍ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԹԱՄԱՐԱ ԳԱՌՆԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանը քննության առնելով վարչական գործը՝ Արաքս համայնքի Արաքս գյուղի բնակիչ Թամարա Գառնիկի Վարդանյանի կողմից իրեն սեփականության իրավունքով պատկանող 35NF236 հաշվառման համարանիշի, CHRYSLER VISION 3.5 մակնիշի, 1C3HEB6F5VH700928 նույնականացման համարի փոխադրամիջոցի գույքահարկի գծով հարկային պարտավորությունները, որի արդյունքում կուտակվել է ≈ 459.658 ՀՀ դրամ պարտք /ապառքը և տույժերը միասին/, **պարզեց հետևյալը.**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի իրավաբանական բաժնի կողմից 2022 թվականի օգոստոսի 31-ին ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղի Պ. Սևակի 31 տան բնակիչ Թամարա Գառնիկի Վարդանյանի նկատմամբ հարուցվել էր վարչական վարույթ:

Արաքս համայնքի ղեկավարի 2022 թվականի օգոստոսի 31-ի N 1385 գրությամբ Թամարա Գառնիկի Վարդանյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն՝ պատշաճ ծանուցվել էր վարչական վարույթի հարուցման, անցկացման վայրի և ժամանակի մասին

/Ծանուցման հիմք՝ Թամարա Գառնիկի Վարդանյանի կողմից ծանուցագրի մեկ օրինակի վրա 2022 թվականի սեպտեմբերի 01-ին արված գրառումը և ստորագրությունը/:

Վարույթի շրջանակներում Թամարա Գառնիկի Վարդանյանի և Արաքսի համայնքապետարանի միջև 2022 թվականի սեպտեմբերի 14-ին կնքվել է վճարման պլան-ժամանակացույց, համաձայն որի՝ Թամարա Գառնիկի Վարդանյանը պարտավորվել է կատարել փոխադրամիջոցի գույքահարկի գծով հարկային պարտավորությունների աստիճանական մարում՝ իննամսյա ժամկետում՝ մինչև 2023 թվականի հունիսի 10-ը:

Թամարա Գառնիկի Վարդանյանը 2023 թվականի հունիսի 09-ին ամբողջությամբ կատարել է փոխադրամիջոցի գույքահարկի գծով հարկային պարտավորությունները /Հիմք՝ վճարման անդորրագրերը և 09.06.2023թ. տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքները/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» ենթակետով, հիմք ընդունելով Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի պաշտոնակատարի կողմից 2023 թվականի հունիսի 09-ին ներկայացված զեկուցագիրը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արաքս համայնքի Արաքս գյուղի բնակիչ Թամարա Գառնիկի Վարդանյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Վարչական վարույթը կարճելու մասին որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշոփվող անձանց



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araks.hamaynq@gmail.com, hbn, (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2023 թվականի N 568 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2023 թվականի հուլիսի 13-ին՝ ժամը 10:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (սոցիալական գծով ծածկ. 2.3-8/ թափուր պաշտոնի մրցույթ:
2. 2023 թվականի հուլիսի 13-ին՝ ժամը 12:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի /ծածկ. 3.1-5/ թափուր պաշտոնի մրցույթ:

3. 2023 թվականի հուլիսի 13-ին՝ ժամը 14:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետի /ծածկ. 3.1-6/ թափուր պաշտոնի մրցույթ:
4. Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնել «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանի պահանջներով:
5. Մրցույթի տեխնիկական սպասարկման աշխատանքները կազմակերպելու, մրցույթի մասին հայտարարություն հրապարակելու համար լիազոր անձ նշանակել Մ.Ազատյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հունիսի 12

Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araks.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

09 հունիսի 2023 թվական N567-Ա

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 48-րդ հոդվածով, հիմք ընդունելով Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 25-ի N 48-Ն որոշումը և Արաքս համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի N 6 եզրակացությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել սոցիալական աջակցություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հունիսի 09
Արաքս համայնք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արաքս համայնքի
ղեկավարի
2023 թվականի հունիսի 09-ի N567-Ա որոշման



ԱՆՎԱՆԱՑԱՆԿ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ
ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ

Հ/Հ	ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓ
1.	Զեմմա Ներսիսյան	Խորոնք	30.000 ՀՀ դրամ
2.	Կարեն Կարապետյան	Խորոնք	50.000 ՀՀ դրամ
3.	Հրայր Արևշատյան	Առատաշեն	40.000 ՀՀ դրամ
4.	Մայրանուշ Ներսիսյան	Խորոնք	50.000 ՀՀ դրամ
5.	Զոգան Հասոյան	Ապագա	30.000 ՀՀ դրամ
6.	Գայանե Սուքիասյան	Զրարբի	50.000 ՀՀ դրամ
7.	Կարինե Առուշանյան	Ակնաշեն	40.000 ՀՀ դրամ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araqs.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 հունիսի 2023 թվականի N 566-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արտիմետ գյուղի վարչական տարածքում գտնվող՝ 04-023-0006-0012 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Արտիմետ, 6-րդ փողոց 25 հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հունիսի 9
Արաքս համայնք





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araks.hamaynoq@gmail.com, hbn.' (093)554477

ՈՐՈՇՈՒՄ

08 հունիսի 2023 թվական N 565-Ա

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, «Գնումների մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Արաքսի համայնքապետարանի ծառայողական ավտոմեքենայի համար նոր անվադողեր ձեռք բերելու անհրաժեշտությունից ելնելով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2023 թվականի բյուջեի 01.1.1-ի (Արաքսի համայնքապետարան) 5121 հոդվածից հատկացնել 164.000 (հարյուր վաթսուչորս հազար) ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հունիսի 08
Արաքս համայնք



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araks.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հունիսի 2023թվականի N 564-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղի վարչական տարածքում գտնվող՝ 04-012-0202-0021 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Ապագա, Էջմիածնի խճուղի 43/1 հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հունիսի 7
Արաքս համայնք





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araqh.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հունիսի 2023 թվական N 563-Ա

ՀՈՎՍԵՓ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԶԵԹԻԼՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարը քննության առնելով վարչական գործը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսազյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող Հովսեփ Հովհաննեսի Զեթիլյանին սեփականության իրավունքով պատկանող 04-048-125-007 կադաստրային ծածկագրով, 0.61 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու վերաբերյալ, այն է՝ իրականացվում է ձկնաբուծություն, **պարզեց հետևյալը.**

Հովսեփ Հովհաննեսի Զեթիլյանը /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք. Վաղարշապատ, Դավիթ Անհաղթի փողոց, 27 տ./ թույլ է տվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով խախտումներ, այն է՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնական փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Վերը նշվածի կապակցությամբ Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից հարուցվել է վարչական վարույթ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված պահանջների խախտման փաստով:

Հովսեփ Հովհաննեսի Զեթիլյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն, պատշաճ ծանուցված էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2023 թվականի մայիսի 02-ին տրված LO109224720AM ստացականը և 2023 թվականի մայիսի 15-ին առաքանին հանձնված լինելու վերաբերյալ էլեկտրոնային ապացույց/:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 9-ի N 4-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2023 թվականի ապրիլի 25-ին կազմված արձանագրությունը:

Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 28-ի Հովսեփ Հովհաննեսի Զեթիլյանին ուղղված Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը և այն ստացած լինելու փաստը հավաստող ապացույց:

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական քաժնի առաջատար մասնագետի 2023 թվականի հունիսի 6-ի զեկուցագիրը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Հովսեփ Հովհաննեսի Զեթիլյանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսազյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-048-125-007 կադաստրային ծածկագրով 0.61 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը վարելահող, օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ, այն է՝ իրականացվում է ձկնաբուծություն:

Հովսեփ Հովհաննեսի Զեթիլյանը ներկայացել էր վարչական վարույթի լսմանը, սակայն չի ներկայացրել համապատասխան փաստաթղթեր հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու վերաբերյալ: Լսման ընթացքում նա իրազեկվել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված տուգանքի մասին:

Արդյունքում Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական քաժնի առաջատար մասնագետի կողմից զեկուցագիր է ներկայացվել Արաքս համայնքի ղեկավարին և առաջարկվել՝ իրավախախտող Հովսեփ Հովհաննեսի Զեթիլյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի վերը նշված դրույթների խախտման չափերով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հիսնապատիկի չափերով՝ 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների՝ հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները: Հողամասի թույլատրված օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հողերի օգտագործման սխեմաների, հողաշինարարական այլ փաստաթղթերի, գլխավոր հատակագծերի ու քաղաքաշինական գոտիավորման նախագծերի հիման վրա: Գյուղատնտեսական նշանակության հողեր են համարվում գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար նախատեսված հողատեսքերը: Գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողատեսքերի, բաժանվում են՝ վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի, այլ հողատեսքերի: Նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Տվյալ պարագայում Հովսեփ Հովհաննեսի Զեթիլյանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսազյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող - 04-048-125-007 կադաստրային ծածկագրով, 0.61 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, ոչ նպատակային նշանակությամբ է օգտագործվում, այն է՝ իրականացվում է ձկնաբուծություն,

Արդյունքում տեղի է ունեցել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով խախտումներ, այն է՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն

աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնական փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով,

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածներով, 43-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից ներկայացված զեկուցագիրը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտող Հովսեփ Հովհաննեսի Զեթիլյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսազյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող 0.61 հա, 04-048-125-007 կադաստրային ծածկագրով հողամասը ոչ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հիսնապատիկի չափերով՝ 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարողի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325165232 հաշվեհամարին, ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնք:
3. Իրավախախտող Հովսեփ Հովհաննեսի Զեթիլյանին տալ պարտադիր ցուցում՝ երկամսյա ժամկետում իրականացնել հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխմանն ուղղված աշխատանքներ, հակառակ պարագայում հողամասը բերել նախնական տեսքին և համապատասխանեցնել նպատակային և գործառնական նշանակությանը:
4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ, 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով

սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ Համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հունիսի 07
Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, araqs.hamaynq@gmail.com, հեռ.՝ (093)554477

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հունիսի 2023 թվական N 562-Ա

ՎԱՀԱՆ ԱՐՇԱԿԻ ԱՂԱՄԱԼՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարը քննության առնելով վարչական գործը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսազյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող Վահան Արշակի Աղամալյանին սեփականության իրավունքով պատկանող 04-048-125-008 կադաստրային ծածկագրով, 0.54 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու վերաբերյալ, այն է՝ իրականացվում է ձկնաբուծություն, **պարզեց հերկյալը**.

Վահան Արշակի Աղամալյանը /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Ապագա, 8փ., 10տ./ թույլ է տվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով խախտումներ, այն է՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Վերը նշվածի կապակցությամբ Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից հարուցվել է վարչական վարույթ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված պահանջների խախտման փաստով:

Վահան Արշակի Աղամալյանը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն, պատշաճ ծանուցված էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2023 թվականի մայիսի 02-ին տրված LO109224468AM ստացականը և 2023 թվականի մայիսի 15-ին առաքանին հանձնված լինելու վերաբերյալ էլեկտրոնային ապացույց/:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 9-ի N 4-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2023 թվականի ապրիլի 25-ին կազմված արձանագրությունը:

Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 28-ի Վահան Արշակի Աղամալյանին ուղղված Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը և այն ստացած լինելու փաստը հավաստող ապացույց:

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի 2023 թվականի հունիսի 6-ի զեկուցագիրը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ըննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վահան Արշակի Աղամալյանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսազյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-048-125-008 կադաստրային ծածկագրով 0.54 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը վարելահող, օգտագործվում է ոչ նպատակային նշանակությամբ, այն է՝ իրականացվում է ձկնաբուծություն:

Վահան Արշակի Աղամալյանը, լինելով պատշաճ ծանուցված, չի ներկայացել վարչական վարույթի լսմանը:

Արդյունքում Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից զեկուցագիր է ներկայացվել Արաքս համայնքի ղեկավարին և առաջարկվել՝ իրավախախտող Վահան Արշակի Աղամալյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի վերը նշված դրույթների խախտման չափերով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հիսնապատիկի չափերով՝ 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների՝ հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները: Հողամասի թույլատրված օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հողերի օգտագործման սխեմաների, հողաշինարարական այլ փաստաթղթերի, գլխավոր հատակագծերի ու քաղաքաշինական գոտիավորման նախագծերի հիման վրա: Գյուղատնտեսական նշանակության հողեր են համարվում գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար նախատեսված հողատեսքերը: Գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողատեսքերի, բաժանվում են՝ վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի, այլ հողատեսքերի: Նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Տվյալ պարագայում Վահան Արշակի Աղամալյանի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսագյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող իրեն սեփականության իրավունքով պատկանող 04-048-125-008 կադաստրային ծածկագրով, 0.54 հա հողամասը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, ոչ նպատակային նշանակությամբ է օգտագործվում, այն է՝ իրականացվում է ձկնաբուծություն,

Արդյունքում տեղի է ունեցել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով խախտումներ, այն է՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի

նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով,

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածներով, 43-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից ներկայացված գեկուցագիրը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտող Վահան Արշակի Աղամալյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսազյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող 0.54 հա, 04-048-125-008 կադաստրային ծածկագրով հողամասը ոչ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հիսնապատիկի չափերով՝ 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարողի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325165232 հաշվեհամարին, ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնք:
3. Իրավախախտող Վահան Արշակի Աղամալյանին տալ պարտադիր ցուցում՝ երկամսյա ժամկետում իրականացնել հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխմանն ուղղված աշխատանքներ, հակառակ պարագայում հողամասը բերել նախնական տեսքին և համապատասխանեցնել նպատակային և գործառնական նշանակությանը:
4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ, 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ Համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հունիսի 07
Արաքս համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արաքս համայնք, գ. Գայ, Ա. Խաչատրյան 1, 093554477
araq.s.hamaynq@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հունիսի 2023թվականի N 561-Ա

ՀԱՍՅԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ակնաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող՝ Լալա Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 04-005-0058-0019 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արաքս համայնք, գյուղ Ակնաշեն, 11-րդ փողոց 24 հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության կադաստրի պետական կոմիտե՝ պետական գրանցում տալու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՂԱԶԱՐ ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հունիսի 7
Արաքս համայնք





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք

ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Գայ, Ա. Խաչատրյան 1, araks.hamaynq@gmail.com, hbn.՝ (093)554477

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հունիսի 2023 թվական N 560-Ա

ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱԿՈՐՅԱՆ ԱՐՍԵՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարը քննության առնելով վարչական գործը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսազյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող, «Հակոբյան Արսեն» Ա/Ձ-ին սեփականության իրավունքով պատկանող 04-048-0125-0004 և 04-048-125-003 կադաստրային ծածկագրերով 0.17 հա և 0.25 հա հողամասերը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու վերաբերյալ, այն է՝ իրականացվում է ձկնաբուծություն, **պարզեց հերկյալը**.

«Հակոբյան Արսեն» Ա/Ձ-ն /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ապագա, 16փ., 17տ./ թույլ է տվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով խախտումներ, այն է՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով, իսկ հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Վերը նշվածի կապակցությամբ Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի կողմից հարուցվել է վարչական վարույթ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով սահմանված պահանջների խախտման փաստով:

«Հակոբյան Արսեն» Ա/Ձ-ն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն, պատշաճ ծանուցված էր վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին /հիմք՝ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից 2023 թվականի մայիսի 02-ին տրված LO109224563AM ստացականը և 2023 թվականի մայիսի 15-ին առաքանին հանձնված լինելու վերաբերյալ էլեկտրոնային ապացույց/:

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 9-ի N 4-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2023 թվականի ապրիլի 25-ին կազմված արձանագրությունը:

Արաքս համայնքի ղեկավարի 2023 թվականի ապրիլի 28-ի «Հակոբյան Արսեն» Ա/Ձ-ին ուղղված Վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցագիրը և այն ստացած լինելու փաստը հավաստող ապացույց:

ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի 2023 թվականի հունիսի 6-ի զեկուցագիրը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

«Հակոբյան Արսեն» Ա/Ձ-ի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսագյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-048-0125-0004 և 04-048-125-003 կադաստրային ծածկագրերով 0.17 հա և 0.25 հա հողամասերը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը վարելահող, օգտագործվում են ոչ նպատակային նշանակությամբ, այն է՝ իրականացվում է ձկնաբուծություն:

«Հակոբյան Արսեն» Ա/Ձ-ն, լինելով պատշաճ ծանուցված, չի ներկայացել վարչական վարույթի լսմանը:

Արդյունքում Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից զեկուցագիր է ներկայացվել Արաքս համայնքի ղեկավարին և առաջարկվել՝ իրավախախտող «Հակոբյան Արսեն» Ա/Ձ-ին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի վերը նշված դրույթների խախտման չափերով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հիսնապատիկի չափերով՝ 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների՝ հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները: Հողամասի թույլատրված օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հողերի օգտագործման սխեմաների, հողաշինարարական այլ փաստաթղթերի, գլխավոր հատակագծերի ու քաղաքաշինական գոտիավորման նախագծերի հիման վրա: Գյուղատնտեսական նշանակության հողեր են համարվում գյուղատնտեսական կարիքների համար առանձնացված և գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման, բազմամյա տնկարկների հիմնման, խոտհնձի, անասունների արածեցման, ինչպես նաև գյուղատնտեսական այլ նպատակների համար նախատեսված հողատեսքերը: Գյուղատնտեսական նշանակության հողերը, ըստ հողատեսքերի, բաժանվում են՝ վարելահողերի, բազմամյա տնկարկների, խոտհարքների, արոտավայրերի, այլ հողատեսքերի: Նույն օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Տվյալ պարագայում «Հակոբյան Արսեն» Ա/Ձ-ի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսապուղ գյուղի վարչական տարածքում գտնվող * իրեն սեփականության իրավունքով պատկանող, 04-048-0125-0004 և 04-048-125-003 կադաստրային ծածկագրերով 0.17 հա և 0.25 հա հողամասերը, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, օգտագործվում են ոչ նպատակային նշանակությամբ, այն է՝ իրականացվում է ձկնաբուծություն:

Արդյունքում տեղի է ունեցել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով խախտումներ, այն է՝ հողամասերը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելը, որն առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի

նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով,

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին և 2-րդ պարբերություններով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածներով, 43-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետի կողմից ներկայացված զեկուցագիրը,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտող «Հակոբյան Արսեն» Ա/Ձ-ի նկատմամբ նշանակել վարչական տուգանք՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Լուսազյուղ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-048-0125-0004 և 04-048-125-003 կադաստրային ծածկագրերով 0.17 հա և 0.25 հա հողամասերը ոչ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի և հիսնապատիկի չափերով՝ 150.000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն՝ տուգանքը պետք է վճարվի սույն որոշումն իրավախախտում կատարողի կողմից իրազեկվելուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ ֆինանսների նախարարության 900325165232 հաշվեհամարին, ստացող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնք:
3. Իրավախախտող «Հակոբյան Արսեն» Ա/Ձ-ին տալ պարտադիր ցուցում՝ երկամսյա ժամկետում իրականացնել հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխմանն ուղղված աշխատանքներ, հակառակ պարագայում հողամասը բերել նախնական տեսքին և համապատասխանեցնել նպատակային և գործառնական նշանակությանը:
4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ, 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ Համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԳԱՐ՝



Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ

2023 թվականի հունիսի 07
Արաքս համայնք